ՍԿՍՎԵՑ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 13-րդ ուսումնական տարվա վերամուտի հանդիսությունը, որին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, դասախոսներ և բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց միասնական «Հայր մեր»-ով, որից հետո Դպրանոցի սաները կատարեցին Հայաստանի Հանրապետության և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի օրհներգերը:

Ողջույնի խոսքով ներկաներին դիմեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը: Բոլորին շնորհավորելով վերամուտի առթիվ, Հայր Սուրբը խորհրդածեց մարդու կյանքում անհրաժեշտ և կենսական երեք՝ նյութեղեն, մտավոր ու հոգևոր սեղանների մասին. «Այս երեք սեղաններից տևական ճաշակումով միայն արժեք կստանա մարդը, մարդը կմարդանա, և հատկապես հոգևոր ծառայության նվիրվելուն պատրաստակամ անձը, հետևաբար պարապ չենք թողնելու այս երեքից միաժամանակ ճաշակելու քաղցրությունը»,- նշեց տեսուչ Հայր Սուրբը:

Դպրանոցի սաները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ կատարելով շարականներ և Կոմիտաս Վարդապետի մշակմամբ ժողովրդական երգեր: Ուսանողության անունից ներկաներին ողջունեց Ե լսարանի սան Հովհաննես Գրիգորյանը:

Ընդունված ավանդույթով տեսուչ Հայր Սուրբը նորավարտ վազգենյանցիներին նվիրեց Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը՝ որպես մշտական ուղեկից իրենց հոգևոր կյանքի: Նոր շրջանավարտների անունից սրտի խոսք ասաց նաև Հովհաննես Ասատրյանը:

Հանդիսության վերջում ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Հանդիսությունն ավարտվեց միասնական Տերունական աղոթքով և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՆՈՐԱՆԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՏԻԿԻՆԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՏԵՍԵՍԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԳԵՆԵՐԱԼ ԼԵՅՏԵՆԱՆՏ ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՆՔԱՐԱՆՅԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՌԹԻՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԳԵՆԵՐԱԼ ԼԵՅՏԵՆԱՆՏ ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՆՈՐԱՆԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՏԻԿԻՆԸ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԵՎ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՌՋԵՎ